ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԻՄԱ

DECENT WORK NOW

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
Բիզնես և մարդու իրավունքներ

HELSINKI CITIZENS ASSEMBLY
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
ACTOR
APR Group

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը սահմանվում է որպես ընկերությանն առնչվող տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրներին վերաբերող բիզնես գործառույթ, որի նպատակն է այդ խնդիրների համար գտնել այնպիսի **լուծումներ**, որոնք **շահավետ** կլինեն և՛ **ընկերության**, և՛ **հասարակության**, և՛ **պետության** համար: Այդ լուծումներն ուղղակիորեն առնչվում են նաև աշխատանքային իրավունքներին և պայմաններին և այդքանով խիստ էական են այս փաստաթղթի համատեքստում:

Այս փաստաթուղթը հիմնականում հենվում է ԵԱՀԿ-ն և Բիզնեսի աջակցման կենտրոնը Հայաստանյան ընկերությունների համար կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վերաբերյալ ուղեցույցի[1] տեղեկության և 2019թ. Հելսինկյան Քաղաքաիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախաձեռնությամբ տեղի ունեցած «Կորպորատիվ հաշվետվողականություն անցումային արդարադատությունում ու դրանից անդին և իրավապաշտպանների դերը» աշխատաժողովի ամփոփիչ փաստաթղթի վրա:[2]

Երբեմն կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դրսևորում է ընկալվում ընկերության կողմից իրականացված բարեգործությունը: Մինչդեռ պետք է նկատել, որ բարեգործությունը միանգամյա կամ պարբերական օգնություն է, որի արդյունքում ստեղծված միակ արդյունքը կազմակերպության բարի համբավն է: Բարեգործությունը

---

[1] ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ուղեցույց հայկական կազմակերպությունների համար https://www.osce.org/files/f/documents/6/7/261381.pdf

[2] Անցումային արդարադատության օրակարգում կորպորատիվ հաշվետվողականությանն ուղղված գործողությունների ներառման առաջարկություններ, https://hcav.am/pastatught-ancumayin/

երկարաժամկետ ռազմավարական նշանակություն չունի և իրականացվում է ըստ ռեսուրսների առկայության:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն առաջին հերթին ուղղված է ընկերության կայունության ապահովմանը և ունի 2 բաղադրիչ.

1. Ընկերության գործունեությունից բխող **բնապահպանական** և **սոցիալ-տնտեսական** խնդիրների նվազեցում, ընդհուպ դրանց վերացում: Այսինքն ընկերության բացասական ազդեցության նվազեցում:

2. Ընկերությունից **անկախ**, սակայն նրա **գործունեությանն առնչվող** ու դրա վրա ազդեցություն ունեցող **խնդիրների լուծումների** մշակում:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ենթադրում է երկարաժամկետ ու հետևողական գործողություններ, որոնց պլանավորման ժամանակ հաշվի են առնվում թե՛ ընկերության, թե՛ դրա հետ առնչվող բոլոր կողմերի շահերը:

Օրինակ կազմակերպության կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն կարող է լինել **ներառական ու ֆիզիկապես մատչելի միջավայրի ստեղծումը**, որը հնարավորություն է տալիս ոչ միայն դարձնել ծառայությունները տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի, այլ նաև ներգրավել նրանց որպես աշխատողներ: Այս մոտեցումը օգնում է թե՛ ընկերության վարկանիշի բարձրացմանը, թե՛ շուկայի ու մարդկային ռեսուրսների ընդլայնմանը, և թե՛ չափանիշ է դառնում այլ ընկերությունների համար, որոնք կարող էին այլ իրավիճակում կամ սովորույթի ուժով չկարևորել մատչելիությունը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին խոսելիս առաջին հերթին հիշում ենք տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների

ոլորտում աշխատող ընկերություններին: Այս ընկերությունները, Հայաստանում բիզնես ծավալելիս, բերում են նաև իրենց կորպորատիվ մշակույթի մաս հանդիսացող սոցիալական պատասխանատվության բաղադրիչը, որն օգնում է ոչ միայն բուն բիզնեսի կայուն առաջխաղացմանն, այլ նաև **բիզնես վարքագիծ է թելադրում**:

Տեղական և արտասահմանյան ներդրողներին գրավելուն միտված կառավարության քաղաքականության լույսի ներքո հարկ է ընդգծել, որ բիզնես գործողություններում իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանության ներառումը տնտեսական հարաբերությունների վերափոխման նույնքան կարևոր տարր է, որքան բիզնեսների և ներդրողների գործունեության այլ խթանների զարգացումը: Հետևաբար կարևոր է բարձրացնել պատասխանատու ներդրումների և կորպորատիվ հաշվետվողականության խնդիրները, որոնք բխում են ՄԱԿ-ի՝ բիզնեսի և մարդու իրավունքների վերաբերյալ ուղենիշային սկզբունքներից և ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից: ՄԱԿ-ի ուղենշային սկզբունքները հենված են երեք հիմնասյուների վրա և հիշեցնում են պետություններին մարդու իրավունքները (այդ թվում նաև երրորդ կողմի խախտումներից) պաշտպանելու պարտավորությունը, մասնավոր դերակատարներին՝ մարդու իրավունքները հարգելու պարտավորությունը, ինչպես նաև վնասների վերականգման մեխանիզմների առկայությունը:

Համապարփակ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ենթադրում է ընկերության կամ կազմակերպության կողմից ռազմավարության մշակում, որը ներառում է ներքին և արտաքին գործոնների ու ընթացակարգերի վերագնահատում և ներառում:

Կախված ընկերությունների կամ կազմակերպությունների չափից և գործունեության տեսակից, նրանց կողմից հաշվի առնվող հանգամանքները տարբեր են: Այս փաստաթղթում մենք անդրադառնում ենք միայն **երկու բաղադրիչ**ի, որոնք էական ազդեցություն ունեն լայն հանրության տեսանկյունից և ենթադրում են պետության միջամտություն և արդյունավետ համակարգում:

Բնապահպանություն և շրջակա միջավայր

Բնապահպանության ոլորտում առկա աղետալի իրավիճակն ըստ էության արտացոլում է բնակչության սոցիալ-տնտեսական-առողջապահական վիճակի նկատմամբ մասնավոր շահի գերակայությունը, որի համար ստեղծվել և կիրառվել են տարբեր կոռուպցիոն սխեմաներ: Այս ոլորտում կարևոր հիմնահարցեր են՝

- Հանքարդյունաբերության կարգավորումների իրավաչափությունը
- Ազդակիր համայնքների բնակիչների իրավունքների պաշտպանությունը
- Հանրային տարածքներ շահագործող զարգացման և վերակառուցման ծրագրերի ազդեցությունը
- Հանրային գերակա շահի և մասնավոր շահի փոխազդեցությունը
- Հանրային մասնակցություն որոշումների կայացմանը և ազդարարների ու ակտիվիստների պաշտպանությունը
- Կապիտալ շինարարության ընթացքում բնապահպանական նորմերի պահպանումը
- Կլիմայի փոփոխության հետևանքների ամբողջական գիտակցումն ու բացասական հետևանքների կանխարգելումը

Բնապահպանության և շրջակա միջավայրի պաշտպանության առումով արձանագրված հիմնական խնդիրներն են՝

- Սպասարկելով մասնավորի շահերը՝ ՀՀ բնապահպանական օրենքները ստորադասվել կամ փոփոխվել են՝ համապատասխանեցվելով միջազգային և կորպորատիվ ոչ խիստ և ոչ պարտադիր չափանիշներին բնության և հանրային շահին ծառայելու փոխարեն, այս առումով վերջին բացասական զարգացումը Ամուլսարի շահագործման անխոչընդոտ հնարավորության ապահովումն էր[3]
- Առողջապահական, տնտեսական հետազոտությունների/ուսումնասիրությունների պակասը և ձևականությունը, հնարավորություն չի տվել գնահատել յուրաքանչյուր ծրագրի (օրինակ հանքարդյունաբերական) ազդեցությունը համայնքի վրա՝ միաժամանակ տալով համայնքի սոցիալ-տնտեսական-առողջապահական առկա պատկերը մինչև նման ծրագրերի իրականացումը
- Հանրային գերակա շահի ներքո քաղաքացիների սեփականության և առողջության իրավունքները խախտվել են՝ խոշոր բիզնեսի շահերի սպասարկման համար
- Բնապահպանական խախտումների համար սահմանված պատասխանատվության ենթարկելու մեթոդներն անարդյունավետ չեն և կիրառվել են սելեկտիվ կերպով՝ այսպիսով նպաստելով ընդհանուր անպատժելիությանը և հանրության/բնության խոցելիությանը
- Իրավապաշտպան-ակտիվիստներին լռեցնելու նպատակով նրանց նկատմամբ ճնշումները հասել են մինչև ֆիզիկական բռնության, սոցիալական մեդիաներում հերյուրանքների, զրպարտության և սուտ մատնության հիմքերով հետապնդումների

---

[3] Ամուլսարը կշահագործվի. անհրաժեշտ բոլոր թույլտվությունները «Լիդիան Արմենիա»-ն ստացել է, https://hy.armradio.am/archives/475141

- 2024թ. Լոռու և Տավուշի մարզերում տեղի ունեցած ջրհեղեղի հիմնական պատճառ դարձավ այն, որ ճանապարհաշինության ընթացքում տնտեսումների իրականացման նպատակով ճանապարհների լայնացումը իրականացվել է Դեբեդ հետի հունի նեղացման և ոչ թե ճանապարհամերձ ժայռերի հեռացման հաշվին: Արդյունքում վարար տեղումների և ՀԷԿ-երի ժամանակավոր անսարքության պայմաններում հեղեղը վերացրեց նորակառույց ճանապարհները՝ ահռելի վնաս պատճառելով բնակիչներին և ենթակառուցվածքներին:

Այս խնդիրների լուծման և հետագա խախտումների կանխարգելման նպատակով առաջարկվում են հետևյալ գործողությունները՝

- Լրացնել հետազոտական պակասը, որոշումներ կայացնելիս ներառել բոլոր գերատեսչություններին (առողջապահություն, բնապահպանություն և այլն) և ապահովել այդ գերատեսչությունների հայտնած կարծիքների հավասարությունը: Համայնքի բնակիչների կամ շրջակա միջավայրի վրա ազդեցություն ենթադրող ցանկացած գործունեություն նախաձեռնելիս բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ իրականացնել հնարավորությունների և կարիքների ուսումնասիրություն և քարտեզագրում, վերհանել առանցքային խնդիրները
- Ընդունել և իրականացնել շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը
- Բարելավել ազդարարման մեխանիզմը՝ ակտիվիստների, իրավապաշտպանների համար խնդիրների բարձրաձայնման համար անվտանգ հարթակների և պաշտպանության

լրացուցիչ մեխանիզմների ստեղծման միջոցով

- Խախտումների համար կիրառել փուլային պատասխանատվություն՝ շոշափելի տուգանքից մինչև քրեական հետապնդում:

Սոցիալական արդարություն

Սոցիալական արդարության ապահովման առանցքային խնդիրն է հասարակության մեջ ռեսուրսների, իրավունքների և հնարավորությունների արդարացի բաշխումը: Այս առումով կարևոր հիմնահարցեր են՝

- Խտրականության բացառումը և դրա վերահսկման մեխանիզմները
- Հարկային քաղաքականություն և հարկային բարեփոխումների կատարումը՝ ոչ ի հաշիվ միջին և ցածր աշխատավարձ ունեցողների
- Հարկերից խուսափելու սխեմաների բացահայտման մեխանիզմները
- Կոռուպցիայի դեմ պայքարը և թափանցիկության ապահովման մեխանիզմները

Սոցիալական արդարության առնչությամբ արձանագրված հիմնական խնդիրներն են՝

- Անցած տասնամյակներին ձևավորվել է անհավասարություն խթանող տնտեսակարգ, որը ենթակա է սկզբունքային վերանայման:
- Սոցիալական բևեռացման առաջնային պատճառներից է կապիտալի և սեփականության ապօրինի ձևավորումը, պետական իշխանության և բիզնեսի սերտաճումը, որի հաղթահարման իրավական ընթացակարգերը պետք է բխեն նաև սոցիալական արդարության քաղաքական օրակարգից և դրա ջատագովությունից
- Գործում է հարկային բարդ և անարդյունավետ համակարգ, որում առանցքային է պրոգրեսիվ հարկման սխալ կիրառումը, ինչպես նաև

Պետական եկամուտների կոմիտեի և հարկատուների միջև անվստահությունը, որի արդյունքում ՊԵԿ-ն առաջնորդվում է քաղաքացիների անբարեխիղճ հարկատու լինելու կանխավարկածով, իսկ քաղաքացիները վստահ չեն, որ իրենցից ակնկալվում է միայն օրինական պարտավորությունների կատարում:

- Սոցիալապես առավել ունեզուրկ խավերը չունեն իրենց շահերը անմիջական ներկայացնող կառույցներ:

Այս խնդիրների լուծման և հետագա խախտումների կանխարգելման նպատակով առաջարկվում են հետևյալ գործողությունները՝

- ՀՀ կառավարության ծրագրում և օրակարգում հստակեցնել և արտացոլել սոցիալական արդարության սկզբունքները
- Հանրային ոլորտում աշխատավարձերի և պարգևավճարների տրամադրման համար ստեղծել թափանցիկ, արդարացի և չափելի համակարգ
- Նպաստել քաղաքացիների ինքնակազմակերպմանը և մասնակցությանը՝ քաղաքացիական նախաձեռնությունների, արհմիությունների տեսքով
- Ստեղծել սոցիալական բնակարանաշինության մասին օրենսդրական հիմքեր, համայնքներում իրականացնել սոցիալական բնակարանաշինություն և սոցիալական բնակարանաշինության համապարփակ ծրագիր
- Բարձրացնել վարկառուների իրավունքների պաշտպանությունը և օրենսդրորեն ամրագրել վարկերի տոկոսադրույքների զսպման արդյունավետ մեխանիզմներ
- Բանկերին և վարկային կազմակերպություններին պարտավորեցնել պայմանագրերում նշել վճարվող իրական տոկոսադրույքները

- Բարելավել գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության օրենսդրական հիմքերը
- Գյուղացիական ասոցիացիաների և գյուղապրանքի սպառման և բաշխման ցանցերի ստեղծման նպատակով տրամադրել պետական աջակցություն
- Ապահովել կրթական համակարգի արդարությունը՝ կրթության ֆինանսավորման բանաձևը փոփոխելով ի օգուտ պակաս ֆինանսավորվող մարզային դպրոցների
- Բիզնես գործունեության համար պետության կողմից հավասար պայմաններ ստեղծել բոլորի համար, բացառել գերիշխող դիրքի չարաշահումը
- Ընդունել շահերի բախումն արգելող համապարփակ օրենք՝ բիզնեսը տարանջատելով քաղաքականությունից և զերծ կոռուպցիոն սխեմաների մասնակցության գայթակղությունից
- «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվող Հավասարության խորհրդի կամ այլ մարմնի միջոցով ապահովել խտրականության դեպքերի ամբողջական քննությունը և իրավունքների պաշտպանությունը
- Ընդունել Վերանայված սոցիալական խարտիայի լրացուցիչ դրույթները և վավերացնել անհատական և կոլեկտիվ բողոքների հնարավորություն ընձեռող գործիքները
- Հարկային համակարգի բարեփոխումների իրականացման ընթացքում ապահովել ցածր և միջին եկամուտ ստացող անձանց շահերի առաջնայնությունը
- Հարկային բարեփոխմանը զուգահեռ իրականացնել դատահիրավական արդար համակարգի ստեղծումը

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և հաշվետվողականության ապահովման առումով առանցքային կարևորություն ունի նաև ԵՄ Հայաստան **Հապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 88-րդ հոդված**ը նախատեսում է՝

“Կողմերը պետք է խթանեն կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը և խրախուսեն պատասխանատու այնպիսի գործարար գործելակերպը, ինչպիսին է Բազմազգ ձեռնարկությունների համար ՏՀԶԿ ուղեցույցներով, ՄԱԿ-ի Գլոբալ Կոմպակտ նախաձեռնությամբ, ԱՄԿ-ի՝ բազմազգ ձեռնարկություններին և սոցիալական քաղաքականությանն առնչվող սկզբունքների եռակողմ հռչակագրով և ISO 26000-ով խրախուսվող գործելակերպը:”

————————————

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

DECENT WORK NOW
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԻՄԱ

Ո՞Մ դիմել, երբ խախտվել են ձեր աշխատանքային իրավունքները

Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին՝
Թեժ գիծ՝ 81-07
Էլեկտրոնային դիմելու հղում
www.employeeprotect.am/am/report

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Անվճար խորհրդատվություն՝ 077 342268
Էլեկտրոնային դիմելու հղում
www.facebook.com/DecentWorkNow
www.arhmiutyun.am/contact

Մարդու իրավունքների պաշտպան
Թեժ գիծ՝ 116
Մարզային գրասենյակներ
www.ombuds.am/am/site/ApplyTeamAddress
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Թեժ գիծ՝ 114
Էլեկտրոնային դիմելու հղում
www.e-request.am/hy

HELSINKI CITIZENS ASSEMBLY
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՏԻ հասարակությունների կենտրոն
ACTOR
APR Group